ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

30 օգոստոսի 2013թ.

Նախագահ՝ Ա. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2013-14թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակների հաստատում:*

   Զեկուցող՝ ֆակուլտետի դեկան Ա. Ցուցուլյան

2. *Խորհրդի աշխատանքային պլանի հաստատում:*

   Զեկուցող՝ ֆակուլտետի դեկան Ա. Ցուցուլյան

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակները ըստ մասնագիտությունների: Դասացուցակը կազմվել է I, II, IV կուրսերի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/ գրաֆիկով, ըստ ամբիոնային ուսումնական պլանների:

Հարկ է նշել, որ համեմատած նախորդ տարիների հետ ըստ մասնագիտությունների կրճատվել է դասաժամերի ժամաքանակը: Դասախոսների ծանրաբեռնվածության մեջ է մտել նաև հեռակա ուսուցման դասաժամերը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- «Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի վարիչ Մ. Ա. Զաքարյանը: Նա նշեց, որ դասացուցակը կազմվել է ուսումնական պլանին համապատասխան: Կապված ուսանողների թվաքանակի հետ կատարվել է դասաժամերի կրճատում: Համակարծիք լինելով ներկայացված դասացուցակին նա առաջարկեց հաստատել:

Այնուհետև ելույթ ունեցավ «Անտառագիտության» ամբիոնի վարիչ Ա. Զ. Ալավերդյանը: Նա ևս ընդգծեց արդեն բազմիցս քննարկված և կազմված ուսումնական պարապմունքների դասացուցակների ճշտությունը և որոշեցին ներկայացնել տնօրենություն հաստատելու:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2013-14թթ. ուստարվա I կիսամյակի դասացուցակը:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը: Նա ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը:

Քննարկումից հետո եղավ ընդհանուր առաջարկ հաստատելու 2013-14թթ. ուստարվա խորհրդի աշխատանքային պլանը:

Զեկուցողը միաժամանակ ներկայացրեց ամբիոնների խորհուրդների աշխատանքային պլանները: Եղավ ընդհանուր քննարկում: Այն ևս արժանացավ հավանության և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2013-14թթ. ուստարվա խորհրդի աշխատանքային պլանը:

2. Հաստատել ամբիոնների խորհրդի աշխատանքային պլանները:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա.Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ